

Հավելված N 1  
 ՀՀ կառավարության 2018 թվականի  
 հունվարի 18-ի N 133 - Ն որոշման

Հավելված N 3  
 ՀՀ կառավարության  
 2015 թվականի սեպտեմբերի  
 25-ի N 1141-Ն որոշման

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ  
 ՉԵԶՈՔԱՑՄԱՆԸ ԵՎ (ԿԱՄ) ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

#	Կոռուպցիոն ռիսկ	Խնդրի բովանդակություն	Ռիսկի չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների	Միջոցառման իրականացման ժամանակահատված	Միջոցառումն իրականացնող մարմին	Ֆինանսավորման աղբյուր
<b>ՕՐԻՆԱՎՈՐ ԵՎ ԲԱՐԽԻՂՃ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴԱՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ</b>						
1.	Հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում հակակոռուպցի	Առկա է հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավման խնդիր հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում:	1) Իրականացնել հարկային և մաքսային ծառայողների հակակոռուպցիոն ընկալման նախնական թեսթավորում:	1) Ապրիլի 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՀ արդարադատության նախարարություն,	Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ

	<p>ոն և բարեխղճության ոլորտում:</p>		<p>2) Ներդնել հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանն ուղղված պարտադիր վերապատրաստումների ծրագիր:</p> <p>3) Անցկացնել առնվազն 8 ակադեմիական ժամ պարտադիր վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեխղճության թեմաներով:</p> <p>4) ՀՀ ԿԱ ՊԵԿ և ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնի կայքերում հրապարակել հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանն ուղղված</p>	<p>2) Հունիս 30, 2018 թվական</p> <p>3) Սեպտեմբերի 30ից մինչև դեկտեմբերի 31, 2018 թվական</p> <p>4) Սեպտեմբեր 30, 2018 թվական</p>	<p>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով,</p> <p>Համագործակցու թյամբ՝ ԲՀԿ- ների, քիզնես ասոցիացիաների ներկայացուցիչն երի:</p>	
--	---	--	---	---	--	--

			պարտադիր վերապատրաստումների բովանդակային համատոռագրերը, ներառելով տեղեկություններ դասընթացավարների մասին:			
2.	Պատշաճ հսկողության պակաս պարտադիր վերապատրաստումների և ատեստավորումների անցկացման գործընթացի նկատմամբ:	Առկա է պատշաճ հսկողության պակաս պարտադիր վերապատրաստումների և ատեստավորումների անցկացման գործընթացի նկատմամբ:	<p>1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ստեղծել մշտադիտարկման հանձնաժողով՝ ՊԵԿ ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանձնաժողովը ընտրանքի միջոցով կմասնակցի և հսկողություն կիրականացնի պարտադիր վերապատրաստումների և ատեստավորումների նկատմամբ:</p> <p>2. Հրավիրել ՔՀԿ ներկայացուցիչներին որպես դիտորդ ներկա գտնվել վերապատրաստման և ատեստավորումների</p>	1) Հունիս 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջվում

			դասընթացներին:			
3.	Հարկային և մաքսային ծառայողների հակակոռուպցիոն ատեստավորման անցկացում:	Առկա է հարկային և մաքսային ծառայողների հակակոռուպցիոն ատեստավորման խնդիր:	Հարկային և մաքսային ծառայողների ատեստավորման շրջանակներում նախատեսել և անցկացնել հարկային և մաքսային ծառայողների հակակոռուպցիոն ատեստավորում:	Մինչև դեկտեմբերի 31, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում
4.	Հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնների վերանայման անհրաժեշտություն և համապատասխանեցում միջազգային ստանդարտներ	Առկա է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում պաշտոններ զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերանայման անհրաժեշտություն: Ներկայումս ընդունված վարքագծի կանոնները կրում են ընդհանուր բնույթ, և չեն նախատեսում այնպիսի վարքագծի նորմեր, ինչպիսիք են՝ լավ կառավարումը,	Մշակել և ներդնել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի վարքագծի կանոններ <sup>1</sup> հիմնված միջազգային փորձի վրա, նախատեսելով այնպիսի վարքագծի նորմեր, ինչպիսիք են՝ լավ կառավարումը, բարեխղճությունը, այդ թվում նաև՝ էթիկան, շահերի բախումը, նվերների ընդունելու	Ապրիլի 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում

<sup>1</sup> Համանման հակակոռուպցիոն միջոցառում նախատեսված է նաև Խորվաթիայի 2012-2016թթ. հարկային վարչարարության հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների պլանում՝ [https://www.porezna-uprava.hr/en/EN\\_publicacije/Documents/Strategija\\_Korupcija\\_eng.pdf](https://www.porezna-uprava.hr/en/EN_publicacije/Documents/Strategija_Korupcija_eng.pdf): Համանման կանոններ ներդրել են նաև Լատվիան և Լեհաստանը, որոնք որակվել են ԵԱՀԿ-ի կողմից որպես կոռուպցիայի հաղթահարման լավագույն պրակտիկաներից մեկը սույն ոլորտում՝ <http://www.osce.org/eea/13738?download=true>, էջեր 88-89:

	ին:	բարեխղճությունը, այդ թվում նաև՝ էթիկան, շահերի բախումը, նվերների ընդունելու արգելքը:	արգելքը: <sup>2</sup>			
5.	Հարկային ծառայող-տնտեսվարող սուբյեկտ հարաբերություններում առկա խնդիրներ:	Մասնավոր դեպքերում հարկային ծառայողները տնտեսվարող սուբյեկտներին առաջարկում և մատուցում են հաշվապահական ծառայություններ և/կամ մատուցում են միջնորդավորված ծառայություններ, մասնավորապես՝ ուղղորդում են նմանօրինակ ծառայություններ ստանալ երրորդ անձանից: <sup>3</sup>	1) Մշակել իրավական ակտի նախագիծ՝ նախատեսելով պատասխանատվություն միջնորդավորված հաշվապահական ծառայություններ առաջարկելու և/կամ մատուցելու համար:  2) Փոփոխություն կատարել հարկային ծառայողների վարքագծի	1) Մարտի 31, 2018 թվական  2) Մարտի 31, 2018 թվական	1) ՀՀ ԿԱ ՊԵԿ  2) ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում

<sup>2</sup> Մաքսային ոլորտի միջազգային ասպարեզում հիմնաքարային նշանակության մարմինը Համաշխարհային մաքսային կազմակերպությունն է (Տե՛ս <http://www.wcoomd.org/en.aspx>): Վերջինս ճանաչել է մաքսային ոլորտում վարքագծի կանոնակարգի ընդունման անհրաժեշտությունը Մաքսային համագործակցության խորհրդի Մաքսային ոլորտում լավ կառավարմանը և բարեխղճությանը վերաբերող 2003 թ հռչակագրում (վերանայված **Արուշայի հռչակագիր**): Այն իր մեջ ներառում է հետևյալ հանձնարարականը. Ցանկացած բարեխղճության ծրագրի անկյունաքարային տարրերից է համապարփակ վարքագծի կանոնակարգի ընդունումը, որը սահմանում է շատ գործնական և միանշանակ դրույթներով բոլոր մաքսային կադրերից ակնկալվող վարքագիծ: Կանոնակարգի չպահպանման պատժատեսակները պետք է ներառվեն կանոնակարգում, համապատասխանեն իրավախախտման լրջությանը և ապահովվեն համապատասխան վարչական և օրենսդրական ընթացակարգերով (Տե՛ս [http://www.wcoomd.org/~media/wco/public/global/pdf/about-us/legal-instruments/declarations/revised\\_arusha\\_declaration\\_en.pdf?la=en](http://www.wcoomd.org/~media/wco/public/global/pdf/about-us/legal-instruments/declarations/revised_arusha_declaration_en.pdf?la=en)):

<sup>3</sup> Հարկային ծառայողների կողմից ամսական թաքնված վճարներ են հավաքագրվում: Այս արատավոր երևույթը նվազեցնելու համար դեռևս 2016 թվականի մարտ ամսին ՊԵԿ նախագահի կողմից իջեցվել է հրաման, ըստ որի հարկային ծառայողներն այլևս կցված չեն կոնկրետ տնտեսվարողների, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսվարողները տեղեկացված չեն այդ փոփոխության մասին, իսկ հարկային ծառայողները շարունակում են ամսական թաքնված վճարներ հավաքագրել ՓՄՁ-ներից:

			<p>կանոններում՝ նախատեսելով հարկային ծառայողների համար հաշվապահական գրասենյակների հետ փոխկապակցվածության վերաբերյալ շահերի բախման հայտարարագրման պարտականություն:</p> <p>3) Հարկային մարմիններում տեղադրել հարկային ծառայողների կողմից հաշվապահական ծառայություններ առաջարկելու, մատուցելու, նմանօրինակ ծառայություններ ստանալու համար երրորդ անձանց մոտ ուղղորդելու (միջնորդավորված ծառայություններ) մասին արգելող ցուցանակներ: Համանման ցուցանակ տեղադրել ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքի առաջին էջում, ինչպես նաև տնտեսվարող</p>	<p>3) Հունվարի 30, 2018 թվական</p>	<p>3) ՀՀ ԿԱ ՊԵԿ</p>	
--	--	--	---	------------------------------------	---------------------	--

			սուբյեկտներին տեղեկություններ տրամադրվող բաժնում:			
6.	Հարկային և մաքսային ծառայողների կարգապահական պատասխանատվությունը:	<p>ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում հրապարակվում է հարկային և մաքսային ծառայողների կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները<sup>4</sup>, որտեղից հասկանալի չէ, թե ի՞նչ բնույթի խախտումներ են տեղի ունենում ծառայողների կողմից, դրանց պարբերականությունը, տարածվածությունը, որը հնարավորություն կտա միջոցներ ձեռնարկել կոնկրետ տեսակի խախտումների վերացման ուղղությամբ, որը կկրի նաև կանխարգելիչ բնույթ:</p> <p>Դրան զուգահեռ պետք է նշել, որ տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներում արտացոլվում է նրանց կողմից թույլ տված</p>	<p>1) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հրապարել հարկային և մաքսային ծառայողներին պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները (առանց օրենքով պաշտպանվող անհատական տվյալների և գաղտնիք համարվող տեղեկությունների հրապարակման), դրանցում ներառելով խախտման բնույթը, որի համար ծառայողները ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:</p>	<p>1) Փետրվարի 28, 2018 թվականից մինչև Դեկտեմբերի 31, 2018 թվական</p>	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում:

<sup>4</sup> <http://petekamutner.am/Content.aspx?itn=tsTIDisciplinaryPenalties>, <http://petekamutner.am/Content.aspx?itn=csCIDisciplinPenalties>

		խախտման բնույթը և ցուցաբերած գործողությունը կամ անգործությունը <sup>5</sup> :				
<b>ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ</b>						
7.	Մաքսային արժեքի որոշման՝ «Գործարքի գնի» մեթոդի կիրառման խնդիրները:	Հայաստանի Հանրապետության մաքսային սահման տեղափոխվող ապրանքների նկատմամբ՝ օրենքով նախատեսված պայմանների ապահովվման դեպքում, լինում են դեպքեր, երբ չի կիրառվում մաքսային արժեքի որոշման՝ «Գործարքի գնի» մեթոդը:	Ստեղծել և գործարկել «Գործարքի գնի» մեթոդի կիրառման արագ արձագանքման խումբ՝ հնարավորության դեպքում ներգրավելով բիզնեսի շահերը ներկայացողներ կազմակերպությունների:	1) Հունիսի 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ
8.	Մաքսային հսկողության «Կանաչ ուղի» և «Դեղին ուղի» ընթացակարգերի ընտրությունից հետո համապատասխան մարմնի որոշման հիման վրա կարող է կիրառվել	Մաքսային հայտարարագիրը ավտոմատ հայտարարագրման համակարգում ենթարկվում է ընտրանքի, որի արդյունքում ընտրվում է մաքսային հսկողության 3 ուղիներից որևէ մեկը: Այն դեպքում, երբ համակարգը ընտրում է «Կանաչ ուղի» և «Դեղին ուղի» հսկողության տեսակներից որևէ մեկը, ապա մաքսային	1) Վերանայել «Կանաչ ուղի» և «Դեղին ուղի» հսկողության տեսակների ընտրության համար դիսկերի ցուցիչները, դիսկի աստիճանները, դիսկի աստիճանների տոկոսները, դիսկի չափանիշները: 2) Վերանայել մաքսային հսկողության հետբացթողումային	1) Հունիսի 30, 2018 թվական  2) Հունիսի 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջվում

<sup>5</sup> <http://petekamutner.am/Content.aspx?itn=csVLCustomsHousesReg>



	<p>հսկողության «Կարմիր ուղի» ընթացակարգը:</p>	<p>ձևակերպումներ իրականացնող մաքսային մարմնի ղեկավարը (նրա տեղակալը) կամ զննում իրականացնող ստորաբաժանման ղեկավարը (կամ նրա տեղակալը) անկախ ընտրանքի արդյունքներից, իրավունք ունեն գրավոր որոշում ընդունել ապրանքները ենթարկել զննման՝ «Կարմիր ուղի» ընթացակարգով:</p>	<p>հսկողության ռիսկերի ցուցիչները, ռիսկի աստիճանները, ռիսկի աստիճանների տոկոսները, ռիսկի չափանիշները:</p>			
9.	<p>Հսկողության լրացուցիչ երաշխիքների պակաս՝ «Կանաչ ուղի» կամ «Դեղին ուղի» ընթացակարգից՝ «Կարմիր ուղի» սահմանելու դեպքում:</p>	<p>Ընտրության ռիսկերի ցուցիչների չիրապարակումը որոշ դեպքերում ռիսկային է և կարող է հայեցողությունների և չարաշահումների հնարավորություն ընձեռնել իրավասու անձանց, երբ ավտոմատ համակարգի կողմից «Կանաչ ուղի» կամ «Դեղին ուղի» սահմանվելու դեպքում, վերջինս իրավունք ունի որոշում ընդունել՝ «Կարմիր ուղի» սահմանելու վերաբերյալ: Առկա է պատշաճ հսկողության պակաս</p>	<p>Ստեղծել հսկողության լրացուցիչ երաշխիքներ՝ հայեցողությունների և չարաշահումների կանխարգելման նպատակով, այդ թվում՝ մշակել իրավական ակտի նախագիծ, նախատեսելով՝ «Կանաչ ուղի» կամ «Դեղին ուղի» ընթացակարգից՝ «Կարմիր ուղի» սահմանելու դեպքում՝ այդ մասին տնտեսավարող սուբյեկտին գրավոր պատճառաբանված</p>	Մարտի 31, 2018	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում

		<p>հայեցողությունների և չարաշահումների կանխարգելման նկատմամբ, այդ թվում՝ «Կանաչ ուղի» կամ «Դեղին ուղի» ընթացակարգի ընտրությունից հետո մաքսային մարմնի որոշման հիման վրա «Կարմիր ուղի» սահմանելու գործընթացի նկատմամբ:</p>	<p>որոշման տրամադրումը:</p>			
10.	<p>ՀՀ-ում բացակայում է մաքսային հսկողության 4-րդ՝ «Կապույտ ուղի» ընթացակարգը:</p>	<p>Շուրջ 84 երկրներում այդ նպատակով ներդրված ASYCUDA համակարգի ընտրողականության մոդուլում նախատեսված է նաև «Կապույտ ուղի» ընթացակարգը, որը ենթադրում է հսկողություն ավելի ուշ փուլերում՝ մաքսային աուդիտի միջոցով: ASYCUDA համակարգը նախատեսում է ոչհսկայնության 4 ուղիներ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Կարմիր ուղի (Ֆիզիկական գնում),</li> <li>- Դեղին ուղի (Փաստաթղթային գնում)</li> <li>- Կանաչ ուղի (Առանց գնման),</li> </ul>	<p>1) Ներդնել մաքսային հսկողության «Կապույտ ուղի» ընթացակարգը:</p> <p>2) Մշակել «Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի հունիսի 30-ի հրամանում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտի նախագիծ, նախատեսելով մաքսային հսկողության «Կապույտ ուղի» ընթացակարգի ընտրողականության</p>	<p>1) Մարտի 31, 2018 թվական</p> <p>2) Մարտի 31, 2018 թվական</p>	<p>ՀՀ ԿԱ ՊԵԿ</p>	<p>Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ</p>

		- Կապույտ ուղի (Հետբացթողումային աուդիտ (Post clearance audit):	մեթոդաբանությունը:			
11.	ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում ներդնել տրանսպորտային միջոցների մաքսային վճարների առցանց հաշվիչ:	Կոռուպցիոն ռիսկերի առաջացման հիմնական նախադրյալը՝ դա անձի անիրազեկությունն է, ինչը կամա թե ակամա հնարավոր է դարձնում տարբեր չարաշահումների և հայեցողական լիազորությունների կիրառումը:	ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում ներդնել տրանսպորտային միջոցների մաքսային վճարների առցանց հաշվիչ, որը հնարավորություն կտա անձին նախքան տրանսպորտային միջոցների տեղափոխումը, ինքնուրույն, նշված գործիքի կիրառմամբ պարզել, թե՞ ինչ կարժենա Հայաստանի Հանրապետության մաքսային սահման տեղափոխվող տրանսպորտային միջոցների մաքսային վճարները և հարկերը: Արժեքները կրելու են կողմնորոշիչ բնույթ:	Մարտի 31, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ
<b>ՊԵԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ</b>						
12.	«Օպերատիվ-հետախուզակա	Հարկային մարմինների կողմից իրականացվող	Մշակել իրավական ակտի նախագիծ, որով	Հունիսի 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում

	ն գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումների հստակեցման անհրաժեշտություն:	օպերատիվ հետախուզական որոշ միջոցառումների <sup>6</sup> արդյունքում օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցները հարուցում և իրականացնում են վարչական վարույթներ, ինչի արդյունքում հատվում են վարչական վարույթներ և օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու լիազորությունները:	կրացավի օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնող սուբյեկտների կողմից վարչական վարույթների իրականացումը:			չի պահանջում
13.	Տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության մեխանիզմների	1) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 12.04.2016թ.-ի <sup>7</sup> 18-Ն հրամանով սահմանված չէ գանգատարկման հանձնաժողովի անդամների ցանկը <sup>8</sup> , կարգավորված չեն	1) Մշակել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 12.04.2016թ.-ի 18-Ն հրամանում օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ ա)	1) Սեպտեմբերի 30, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ

<sup>6</sup> Այդ միջոցառումներ են՝ օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը, համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքումը, իրերի փաստաթղթերի հետազոտումը:

<sup>7</sup> ՀՀ ԿԱ ՊԵԿ 12.04.2016թ.-ի «ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի, հանձնաժողովին դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևերը հաստատելու, ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N 424-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 18-Ն հրաման, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105593>:

<sup>8</sup> Այս տեղեկությունը հասանելի չէ նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում:

	կատարելագործում:	անդամների շահերի բախման հիմնահարցերը:	կարգավորելով շահերի բախման դեպքերը, բ) նախատեսել խորհրդի անդամների թիվն ու կազմը:			
14.	Ստուգումների կազմակերպման և անցկացման կարգավորումները:	Տնտեսվարող սուբյեկտները տեղեկացված չեն հարկային ստուգումներ իրականացնելուց առաջ ստուգման ընտրանքի և ծրագրի կազմման, ստուգման խմբի ղեկավարի և անդամների նշանակման ընթացակարգերին:	1) Մշակել հարկային հսկողության՝ ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման անցկացման և իրականացման կարգը, այդ թվում նաև՝ ստուգումների և ուսումնասիրությունների ընտրանքի և յուրաքանչյուր դեպքի ստուգման և	Մարտի 31, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում

			<p>ուսումնասիրության ծրագիր կազմելու կարգը, խմբի անդամների իրավասությունների, գործառույթների և պատասխանատվության շրջանակները:</p> <p>2) ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում հրապարակել՝ հարկային հսկողության՝ ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման անցկացման և իրականացման կարգը:</p>	Մարտի 31, 2018 թվական		
<b>ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ</b>						
15.	Հարկային և մաքսային ծառայությունների մասին հետազոտություններ:	Հարկային և մաքսային ծառայությունների մասին հետազոտությունների (Service delivery surveys) իրականացման բացակայություն, որի միջոցով անկախ վերլուծություն իրականացնող ընկերությունը/կազմակերպությունը կիրականացնի շահառուների և հասարակության հետազոտություններ, պարզելու հասարակությանը	Ներդնել և գործարկել հարկային և մաքսային ծառայությունների մասին հետազոտությունների իրականացման ընթացակարգեր:	Սեպտեմբերի 30 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ

		մատուցվող ծառայությունների որակը, բարեփոխումների իրականացման ընթացքը, հասարակությանը ոչ պատշաճ որակի ծառայություններ մատուցելու պատճառները և համակարգում առկա այլ խնդիրներ: <sup>9</sup>				
16.	Պատասխանատվության կիրառում՝ մաքսային հայտարարագրերում փոքր	Մաքսային հայտարարագրերում փոքր խախտումների առկայության հայտնաբերման դեպքում կիրառվում է վարչական պատասխանատվություն <sup>10</sup> :	Մշակել իրավական ակտի նախագիծ, նախատեսելով խախտումների որոշակի թույլատրելի չափ բոլոր այն դեպքերի համար,	Մարտի 31, 2018	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Ֆինանսավորում չի պահանջում

<sup>9</sup> Սույն փորձը ներդրվել և կիրառվում է Լեհաստանում, որը որակվել է ԵԱՀԿ-ի կողմից որպես կոռուպցիայի հաղթահարման լավագույն պրակտիկաներից մեկը սույն ոլորտում: Առհասարակ, Ծառայությունների մասին հետազոտությունները համարվում են հարկային և մաքսային ոլորտի հակակոռուպցիոն արդյունավետ գործիքներ, որոնք օգտագործվում են, որպեսզի տեղեկություններ ձեռք բերվեն սպասարկման որակի մատուցման խոչընդոտող գործոնների վերաբերյալ: Ընդգրկում է ծառայությունների մատուցման բազմաթիվ ասպեկտներ և դուրս հանում անարդյունավետ ծառայությունների մատուցման պատճառները: Նիկարագուայում վերջիններս բարեփոխումների հիմք հանդիսացան: Ծառայությունների մասին հետազոտություններ իրականացվել են նաև Աֆրիկայում (օրինակ՝ Մալի, Թանզանիա, Ուգանդա), Միջին Արևելք (օրինակ՝ Հորդանան), Կենտրոնական և Արևելյան Եվրոպա (օրինակ՝ Բոսնիա և Հերցեգովինա, Ուկրաինա), Հարավային Ասիա (օրինակ՝ Նեպալ, Պակիստան), Լատինական Ամերիկա (օրինակ՝ Նիկարագուա, Բոլիվիա):

<sup>10</sup> Այս խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված տնտեսվարող սուբյեկտը չնչին սխալի պատճառով, որն էական ազդեցություն չի ունենում իր հայտարարագրի վրա, ենթարկվում է պատասխանատվության: Առաջարկվում է նման նվազ կարևորություն ունեցող իրավախախտումների հայտնաբերելու դեպքում կիրառել ավելի մեղմ պատասխանատվության միջոց, այն է՝ նույն տնտեսվարողի կողմից նշված խախտումը առաջին անգամ կատարելու դեպքում իրավախախտում կրկնելու անթույլատրելիության մասին պաշտոնական զգուշացում՝

	<p>խախտումների առկայության հայտնաբերման դեպքում:</p>		<p>երբ մաքսային փաստաթղթերում կատարված բացթողումները, խախտումները կամ սխալները, որոնք հեշտությամբ ուղղելի են և ակնհայտորեն չեն պարունակում կոպիտ շեղումներ, պետությանը չեն պատճառում վնաս, դիտարկել որպես նվազ կարևորություն ունեցող իրավախախտում և սահմանել նախազգուշացում՝ որպես պատասխանատվություն միջոց<sup>11</sup>:</p>			
--	--	--	---	--	--	--

նախազգուշացում, իսկ նույն արարքը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում կատարելու դեպքում՝ կիրառել գործող նորմը՝ տուգանքի նշանակումը 50.000 ՀՀ դրամի չափով:

<sup>11</sup> ԵԱՀԿ-ի կողմից մշակված «Առևտրի և տրանսպորտի դյուրինացմանն ուղղված՝ սահմանը հատելու լավագույն փորձի ձեռնարկ»-ում մեջբերված է Առևտրի համաշխարհային կազմակերպության Ապրանքների առևտրի բազմակողմանի պայմանագրի 5-րդ հոդվածը, որի համաձայն՝ Ոչ մի Պայմանավորվող կողմ չպետք է նշանակի զգալի տուգանք մաքսային կանոնակարգերի կամ ընթացակարգային պահանջների փոքր խախտումների համար: Մասնավորապես, մաքսային փաստաթղթերում կատարված բացթողումների կամ սխալների համար, որոնք հեշտությամբ ուղղելի են և ակնհայտորեն կատարված են առանց դիտավորության կամ հանցավոր/կոպիտ անփութության, նախատեսված պատասխանատվության միջոցը չպետք է ավելի մեծ լինի, քան ուղղակի նախազգուշացումը»:

Առևտրի համաշխարհային կազմակերպության Վերանայված Կյոտոյի համաձայնագրում ևս նշված է, որ անհրաժեշտ է տարբերակել խախտումների տեսակները, որոնք կարող են լինել, օրինակ, փաստաթղթերի աննշան սխալներ՝ ձևակերպումների կամ անփութության հետևանքով՝ մինչև ավելի լուրջ իրավախախտումներ և հանցագործություններ: Օրինակ Վրաստանում 10 տոկոս թույլատրելի շեմ է գործում նշյալ դեպքերի համար:



ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ						
17.	Հակակոռուպցիոն բնույթի հանրային իրազեկման քարոզարշավների կազմակերպում:	Տնտեսվարող սուբյեկտների շրջանում հարկային և մաքսային ոլորտներում հակակոռուպցիոն ընկալման մակարդակի բարձրացման անհրաժեշտություն:	Իրականացնել հանրային իրազեկման քարոզարշավներ տնտեսվարող սուբյեկտների շրջանում՝ հարկային և մաքսային ոլորտներում հակակոռուպցիոն ընկալման մակարդակի բարձրացման ուղղությամբ:	Հունվարի 1, 2018 թվականից մինչև Դեկտեմբերի 31, 2018 թվական	ՀՀ ԿԱ ՊԵԿ	Պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված միջոցներ

1. «Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների» ծրագրի մոնիթորինգի և գնահատման ցուցանիշները ներկայացված է համաձայն Ձև 1-ի (կցված է):
2. «Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների» ծրագրի ֆինանսական գնահատականը ներկայացված է համաձայն Ձև 2-ի (կցված է):

Ձև 1

### ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների հավաքագրման ոլորտի հակակոռուպցիոն միջոցառումների մշտադիտարկման

1.ՕՐԻՆԱՎՈՐ ԵՎ ԲԱՐԽԻՂՃ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴԱՍԻ  
ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հ/Հ	Կոռուպցիոն ռիսկի անվանումը	Գործողության հերթական համարը	Գործողության անվանումը	Գործողության բնույթը	Գործողության տեսակարար կշիռը	Ցուցանիշի հերթական համարը	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի չափման միավորը	Ցուցանիշի բնույթը (1-քանակական, 2-որակական)	Ցուցանիշի փաստացի արժեքը	Ցուցանիշի թիրախային արժեքը	Ցուցանիշի կատարողականը	Գործողության միավորը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում	1.1.	Իրականացնել հարկային և մաքսային ծառայողների հակակոռուպցիոն ընկալման նախնական թեսթավորում	Որակական /Քանակական	0,2	1.1.1.	Նախնական թեսթավորման ծրագրի և թեսթերի պատրաստման ժամկետը	օր	1		Ապրիլի 30, 2018 թվական		
						1.1.2.	Մշակված ծրագիրը և թեսթերը ապահովում են ծառայողների հակակոռուպցիոն ընկալումը գնահատելու հնարավորություն		2	80			
						1.1.3.	Մաքսային և հարկային ծառայողների թեսթավորման պլան-ժամանակացույցի հաստատման ժամկետը	օր	1	Հունիսի 30, 2018 թվական			
						1.1.4.	Թեսթավորում անցած հարկային ծառայողների թիվը	մարդ	1	510			
						1.1.5.	Թեսթավորում անցած մաքսային ծառայողների թիվը	մարդ	1	210			

						1.1.6.*	Հարկային ծառայողների թիվը	մարդ	1		Թիրախային արժեք սահմանված չէ		
						1.1.7.*	Մաքսային ծառայողների թիվը	մարդ	1		Թիրախային արժեք սահմանված չէ		
						1.1.8.	Թեսթավորում անցած հարկային ծառայողների տեսակարար կշիռը ընդհանուր թվում	%	1		80		
						1.1.9.	Թեսթավորում անցած մաքսային ծառայողների թիվը ընդհանուր թվում	%	1		80		
		1.2.	Ներդնել հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանն ուղղված պարտադիր վերապատրաստումների ծրագիր	Որակական /Քանակական	0,4	1.2.1.	Հարկային և մաքսային ծառայողների համար պարտադիր վերապատրաստումների ծրագրի մշակման ժամկետը	օր	1		Մայիսի 8, 2018 թվական		
						1.2.2.	Վերապատրաստման ծրագիրը պարունակում է հակակոռուպցիոն գիտելիքների և բարեխղճության հատկանիշները բարելավելու հնարավորություն	%	2		Հունիսի 30 -ից հետո 80		
						1.2.3.	Վերապատրաստումների անցկացման կարգում համապատասխան փոփոխությունների կատարելու	օր	1		Հունիս 30, 2018 թվական		

																			Սեպտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 31, 2018 թվական		
		1.3.	Անցկացնել տարեկան առնվազն 8 ակադեմիական ժամ պարտադիր վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեխղճության թեմաներով	Քանակական	0,3	1.3.1.	Վերապատրաստումների ծրագրի հաստատման ժամկետը	օր	1												
						1.3.2.	Վերապատրաստում անցած հարկային ծառայողների թիվը	մարդ	1										510		
						1.3.3.	Վերապատրաստում անցած մաքսային ծառայողների թիվը	մարդ	1										210		
						1.3.4.*	Հարկային ծառայողների թիվը	մարդ	1										Թիրախային արժեք սահմանված չէ		
						1.3.5.*	Մաքսային ծառայողների թիվը	մարդ	1										Թիրախային արժեք սահմանված չէ		
						1.3.6.	Վերապատրաստում անցած հարկային ծառայողների տեսակարար կշիռը ընդհանուր թվում	%	1										80		
						1.3.7.	Վերապատրաստում անցած մաքսային ծառայողների թիվը ընդհանուր թվում	%	1										80		
		1.4.	ՀՀ ԿԱ ՊԵԿ և ՊԵԿ «Ոստումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնի կայքերում հրապարակել հակակոռուպցիոն և բարեխղճության ոլորտում հարկային և մաքսային ծառայողների գիտելիքների և	Որակական /Քանակական	0,1	1.4.1.	Պարտադիր վերապատրաստումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման համար ՀՀ ԿԱ ՊԵԿ ՊԵԿ ոստումնական կենտրոնի կայքերում տեխնիկական փոփոխությունների իրականացման ժամկետը	օր	1										Սեպտեմբեր 30, 2018 թվական		

			հմտությունների բարելավմանն ուղղված պարտադիր վերապատրաստումների բովանդակային համատողադրերը, ներառելով տեղեկություններ դասընթացավարների մասին			1.4.2.	Նշված կառույցների կայքերում առաջին տեղեկատվության հրապարկման ժամկետը	օր	1		Սեպտեմբեր 30, 2018 թվական		
						1.4.3.	Տեղեկատվական կայքերի շահագործումը կապված վերապատրաստումների վերաբերյալ պահանջվող տեղեկատվության հրապարկման հետ ապահովված է		2		80		
2	Պատշաճ հսկողության պակաս պարտադիր վերապատրաստումների և ատեստավորումների անցկացման գործընթացի նկատմամբ	2.1.	ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ստեղծել մշտադիտարկման հանձնաժողով՝ ՊԵԿ ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանձնաժողովը ընտրանքի միջոցով կմասնակցի և հսկողություն կիրականացնի պարտադիր վերապատրաստումների և ատեստավորումների նկատմամբ	Քանակական	0,6	2.1.1.	ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի մշտադիտարկման հանձնաժողով ստեղծելու մասին հրամանի հաստատման ժամկետը	օր	1		Հունիս 30, 2018 թվական		
						2.1.2.	Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների կարգի հաստատման ժամկետը	օր	1		Հունիս 30, 2018 թվական		
						2.1.3.	Հանձնաժողովի անվանական կազմը հաստատելու մասին հրամանի ընդունման ժամկետը	օր	1		Հունիս 30, 2018 թվական		
						2.1.4.	Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկումների թիվը	հատ	1		Դիտարկումների թիվը համապատասխանում է մասնակցած վերապատրաստումների թվին		

						2.1.5.*	Հանձնաժողովի կողմից պարտադիր վերապատրաստումների կարգը խախտելու մասին բացահայտված դեպքերի թիվը	հատ	1		Թիրախային արժեք սահմանված չէ		
						2.1.6.	Հանձնաժողովի կողմից պարտադիր վերապատրաստումների կարգը խախտելու վերաբերյալ հայտնաբերված դեպքերի տեսակարար կշիռը մոնիթորինգի ընդհանուր թվաքանակում	%	1		Տեղեկատվությունը հասանելի կլինի դեպքերի արձանագրման դեպքում		
		2.2.	Հրավիրել ԲՀԿ ներկայացուցիչներին որպես դիտորդ ներկա գտնվել վերապատրաստման և ատեստավորումների դասընթացներին	Քանակական	0,4	2.2.1.	Վերապատրաստման և ատեստավորումների դասընթացներին ԲՀԿ ներկայացուցիչների մասնակցության կարգի հաստատման ժամկետը	օր	1		Օգոստոսի 30, 2018 թվական		
						2.2.2.*	Վերապատրաստումներին մասնակցած ԲՀԿ ներկայացուցիչների թիվը	մարդ	1		Թիրախային արժեք չի սահմանվում		
						2.2.3.	Մասնակցած ներկայացուցիչների և վերապատրաստումների թվաքանակի հարաբերությունը տոկոսով	%	1		Տեղեկատվությունը հասանելի կլինի միջոցառման իրականացման ընթացքում		
